

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԵՏԵՐԿՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄԻՈՒԹԵԼՆ ԳԵՏԻՐԷԻ ՄԱՍՆԱԺՈՋՄԱԿԻ



ՁՄԵՆ ՊԱՊԻ

ԵՆՆՈ ՂԱՊԻ

Արի, արի,
Չմեռ պապի,
Պրօզսակ նազի
Պրօզսակ կապի:

Սարմա՛, ձորմա՛
Սուլիք՝ Եզրիք՝
Չկիւրս աստ
Չեւսմբիք:

Finis in usum .
Fis in qlesach
Այս ումկնր
Ան քիւիդ սակ:

Դիլի կամուրջ,
Փուր կարպէս:
Այ անուրազ,
Անձեռ զարպէս:

ՊԱԿ Ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1:2

Չժեռ Պապի — ԽնկՕ Աղեթ	1
Բովանդակութիւն	2
Առաւօտ — ԽնկՕ Աղեթ	3
Հովուիկը — Եղիշէ Արքեպիս. ԴՈՒՐԵԱՆ	4
Ոսկիէ Իլիկը — Խ. Ս.	5
Կարիկն ու Տատիկը — Մ. Մեհրաբեան	8
Անվախ տղան — ՍԱՐՄԷՆ	10
Սեւանայ Լիճը — ՏեղեկԱՏՈՒ	11
Խելացի Շուներ — Վ. Անանեան	13
Հանելուկ	14
Սոխակը վանդակի մէջ — ԽնկՕ Աղեթ	15
Հանելուկներ	15
Մարը — ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ	16
Քաջ Խորոզը — ՍՏ. ԶՕՐԵԱՆ	17
Շուտասկիք	20
Կաղանդի Պատմութիւն — ՍՐԲՈՒ ՀԻ ՇԱՔԱՐԵԱՆ	21
Արջուկն ու Վարդը Վ. ԴԱՐԲԵՆԻ	23
Կծծի Տիկիներ	23
Աղջնակը և Լուցկիները — Թարգմ. ՍԱՀԱԿ ՊԱԼԷՊՅԱՆ	24
Կարիկը	27
Խաչքառ — Առաջարկուած ՕՐ. ՈՎՍԱՆՆԱ ԴԱՐՏԱՇԵԱՆԷ	28

ՏՊԱՐԱՆ ԿՈՐ . ՈՍՏՂ

89, Յուլիս 26 փողոց,

Պուլաւ - Գաղիբէ

Հեռ. 58592

طبعة النجدة الجديدة



ԱՌԱՒՕՏ



ԿՆԿՈ ԱՊԻՐ

Լոյսը լոյսով շողողաց,
Երգը ննչեց սոխակի,
Շողը շողով դողդողաց,
Շուտով արեւ կը ծագի:

Արեւալոյսի ցոլերը
Շապիկ հագան ծիրանի,
Տեսան, քան հաւերը,
Նրանց հագար երանի:

Դաւեսի կնոյւ ծաղիկը
Բացեց քերքեր բուրաւէս,
Եւ վաղորդեան շաղիկը
Երկինք քաւ շողի նէս:

Եւ բարձրացաւ քանձը մէգ
Դե՛սի փրփուր ջրերից.
Զրին ասաւ մի եղէգ
— Տես, լոյս ծագեց վերելից:

ՀՈՎՈՒԿԸ



ԲԵԹՂԵՀԷՄԻ մըսուրին քով՝
Յիսուս Մանուկը երբ ծնած էր նոր՝
Հոն հովիւներ եկան անոր,
Պաշտելու զինք ջերմ հաւատքով:

Առին իրենց հետ ընծաներ
Որ Յիսուսի գան նըւիրեն,
Առատ պտուղ, մեղր ու կաթ,
Փափուկ ճերմակ ալ զգաթ:

Ծերուկ հովիւ մը բերաւ գառ
Իբրեւ նուէր կամ պատարագ,
Պզտիկ հովիւ մըն ալ պատկառ
Հեռուներէն եկաւ արագ,

Ու պաղ քարին վըրայ թափեց
Տաք արցունքի տարափ մը մեծ.
Վասընզի ա՛յդ խեղճը չունէր
Ուրիշ բան մը տալու նըւէր:

Անտէր աղքատ որբ մըն էր ան՝
Բարի մարդոց ձեռքին կարօտ,
Ուստի սրտին սէրը միայն
Ընծայ բերաւ Յիսուսին մօտ.
Այդ աւագին անգամն էր որ
Հարուստ եղաւ եւ ունեւոր:

Յանկարծ աչքերը փայլեցան.
Առաւ իր սրինգը եղէգնիկ,
Ու մեղեդի մը քաղցրածայն
Մըսուրին քով երգեց մեղմիկ:

Յիսուս մանուկն, Յովսէփ, Մարիամ
Գոհ եղան այդ ծայնէն սիրուն,
Որ նըւագովն անուշահամ
Թրթռացուց խորքն անոնց հոգւոյն:

ՈՍԿԻԷ ԻԼԻԿԸ

Կար ու չկար, կին մը կար: Այդ կինը ունէր երկու աղջիկ.
մէկը գեղեցիկ բայց ծոյլ, միւսը տղեղ բայց շատ աշխատասէր:
Մայրը շատ կը սիրէր իր գեղեցիկ աղջիկը:

Տղեղ աղջկան միշտ բուրդ մանել կուտար: Օր մը, երբ ջր-
հորին գլխուն կեցած բուրդ կը մանէր, թեյը փրթաւ և իլիկը ջու-
րը ինկաւ:

Լալով ողբալով եկաւ մօրը պատմեց թէ իլիկը ջուրը ինկաւ:

Մայրը շատ բարկացաւ ու ըսաւ թէ պէտք է անպատճառ ի-
լիկը ջուրէն հանէ, եթէ ոչ ձեռքէն չի ազատիր:

Աղջիկը՝ շուարած, չէր գիտեր թէ ինչպէս իլիկը ջուրէն դուրս
հանէ. եկաւ ջրհորին մօտ, վար ծռեցաւ, և մէկ ալ յանկարծ
ջրհորը ինկաւ: Երբ հորին մէջ աղջիկը ինքզինքը գտաւ, գեղեցիկ
սիրուն մարգագետին մը տեսաւ: Արև, արեգակ, ճառագայթ, կա-
նաչութիւն, ծառ ու ծաղիկ, վարդ ու մեխակ, շուշան և գեռ շատ
ծաղիկներ: Ես քիչ ըսեմ դուն շատ հասկցիր, չտեսած բաները տեսաւ:

Աղջիկը ուրախացաւ և մարգագետինին վրայ քայլելով գնաց,
գնաց ու հասաւ հացով լեցուն փուռի մը առջև: Փուռին մէջէն
ձայներ լսեց, որոնք կ'ըսէին.

— Աղջիկ, հասիր, շուտ հասիր, մեզի փուռէն դուրս հանէ,
այրեցանք, մրկեցանք:

Աղջիկը վազեց, հացերը փուռէն դուրս հանեց, հովին դրաւ
որ պաղին, յետոյ իրարու վրայ դրաւ ու գնաց:

Իրիկունները միշտ կուգար
Մանուկին քունն օրօրելու,
Որ ժպիտով զըւարթարար
Որբին կ'ըլլար շնորհակալու:

*.

Թէ չունիս բան մը Յիսուսին տալու
Աղքատ հովիւին պէս, ի պատիւ անոր
Կըրնաս դուն երգել երգ կամ արէլու,
Եւ վերէն առնել օրհնութիւններ նոր:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ . ԴՈՒՐԵԱՆ

Գնաց, գնաց հասաւ խնձորի ծառի մը: Խնձորենին հիւանդի պէս կը տրար ու կը կանչէր:

— Ա՛խ, մեռա՛յ, մեռա՛յ. բեռս շատ ծանր է. խնձորներս շատ շատ են. ճիւղերուս մեղքցիր. թա՛փ տուր, ցնչէ՛ ճիւղերս:

Աղջիկը լսեց, խղճաց խնձորենիին. ծառը թօթուեց, խնձորները տեղ մը հաւաքեց ու գնաց:

Գնաց, գնաց. այս անգամ հասաւ տան մը առջեւ: Ներս մը տաւ, տեսաւ պառաւ կին մը որ հիւանդ պառկած է:

— Աղջի՛կս, բարով եկար, հազար բարի, ես գաւակ չունիմ, տէր չունիմ, տիրական չունիմ. հիւանդ եմ. պահէ, պահպանէ զիս մինչև առողջանամ:

Աղջիկը հիւանդին մօտ մնաց. հոգ տարաւ, խնամեց, ջուր դրաւ՝ լոգցուց, քրտնցուց, վերջապէս պառաւը ոտքի հանեց:

Երբ պառաւը լաւացաւ, ոտքի ելաւ, աղջիկը ըսաւ.

— Նանի, հիմա հրաման տուր որ երթամ, իլիկս փնտրուեմ, գտնեմ, տուն երթամ, գործիս նայիմ, տունս շատ կարօտցած եմ:

— Լա՛ւ, աղջիկս, շիտակ կ'ըսես. քանի որ հօրենական տունդ կարօտցած ես, երթանք իլիկդ գտնենք:

Ու ձեռք ձեռքի տուին ու գացին:

Քացին, գացին, հասան գոց դուռի մը առջև. Պառաւը ըսաւ.

— Բաղդի դուռ, բարեւ, շատ բարեւ. բացուէ՛, ոսկի անձրեւ մաղէ, այս աղջիկը գեղեցկացուր և մազերը ոսկի դարձուր. ջանասէր և բարի է այս զաւակը. իլիկն ալ ոսկի դարձուր:

Այսպէս որ ըսաւ, դուռը բացուեցաւ, և պառան ու աղջիկը ներս մտան:

Յանկարծ աղջկան գլխուն վրայ ոսկին մաղուեցաւ ու աղջիկը եղաւ ոսկեմազիկ, գեղեցկացաւ, գեղեցիկ կերպասէ հագուստներ հագաւ, դարձաւ կաքաւ:

Պառաւը ոսկիէ իլիկը առաւ, աղջկան տուաւ, համբուրեց ու ըսաւ. «այս իլիկը քու վարձքդ է, աշխատանքիդ գինը. ինծի համար յոգնեցար...»:

Պառաւը այդպէս ըսաւ չըսաւ, յանյարծ դուռը գոցուեցաւ, պառան ալ անյայտացաւ: Աղջիկը աչքը բացաւ գոցեց, ինքզինքը գտաւ տանը առջև, Շունը, կատուն դէմը ելան. աքաղաղն ալ կանչեց:

— Կուկոյիկ կո՛ւ հաւ ու նուս,
Եկաւ հիմա, մեզի կուսայ կուս.
Օրօր, շո՛րձ մի կափաւ.

Ոսկեմագիկը եկաւ.
 Վրան ոսկի է շարեր
 Իլիկը ոսկի է քրեր.
 Գիսէ՛f ով է, ո՞վ
 Հիւանդ պառաւն է բաշխեր.
 Կուկուլիկ կո՛ւ, հաւ ու ֆուս,
 Եկաւ հիմա մեզի կուսա կուս:

Ոսկեմագիկը գնաց մօրը և քրոջը քով: Մայրը և քոյրը սիրով ընդունեցին. ոսկի շատ բերած էր:

Ոսկեմագիկը պատմեց իր տեսածը ու լսածը:

Մայրը իր սիրելի աղջիկն ալ ղրկեց ջրհորին մօտ բուրդ մանելու: Ծոյլ աղջիկը մանեց, մանեց և իլիկը դիտմամբ ջրհորը նետեց ու ինքն ալ գլուխի վրայ մէջը ինկաւ:

Երբ խելքը գլուխը եկաւ, ինքզինքը նոյն մարդագետինին վրայ գտաւ. ու քալեց, քալեց հասաւ փուռին առջևը, հացերը օգնութիւն կը խնդրէին իրմէ պոռալով:

— Հանէ՛ մեզ սա կրակէն. վառեցա՞նք, ալրեցա՞նք:

Ծոյլ աղջիկը պատասխանեց.—

— Որո՞ւ հոգ. ինչուս է պէտք. չեմ կրնար ձեզի համար ձեռքերս, վրաս-գլուխս աղտոտել:

Գնաց, գնաց, խնձորենիին հասաւ, ու լսեց անոր աղաչանքը:

— Մեռա՞յ, բեռս ծանր է. խնձորներս հասուն են. թօթուէ, թափ տուր ճիւղերուս որ թեթեւան քիչ մը, ես ալ հանգիստ չունչ առնեմ:

— Հա՛, ա՛յդ էր պակաս. մեռար-մեռար, որո՞ւ հոգ. ես ի՞նչ ընեմ, ես ոսկեմագիկ դառնալով ոսկի բերելու կ'երթամ:

Գնաց, գնաց հասաւ պառաւին տունը և սկսաւ պառաւին ծառայել:

Առաջին օրը կանուխէն ոտքի վրայ էր. սենեակը հաւաքեց, մաքրեց, հիւանդին կամքը կատարեց:

Երկրորդ օրը սկսաւ ծուլանալ. երրորդ օրը՝ աւելի շատ: Զորրորդ օրը՝ արդէն տեղէն չէր շարժեր:

Պառաւը անկից ձանձրացաւ, հիւանդ-հիւանդ ոտքի ելաւ և ծոյլին տարաւ բաղդի դրան մօտ ու ըսաւ.

— Բացուէ դռնակ, այս աղջկան տուր մէկ ընծայ. անհոգ ու ծոյլ է: Կաթսայ մը կուպր կ'արժէ. թող կպրուի, սե դառնայ. կպրուած տուն վերադառնայ:

Երբ ծոյլ աղջիկը տուն եկաւ, աքաղաղը կանչեց.

ԿԱՐԻԿՆ ՈՒ ՏԱՏԻԿԸ

(Հ Ե Ք Ի Ա Թ)

Փոքրիկ աղջիկ մը կար, անունը Կարիկ։ Օր մը Կարիկի տատիկը ըսաւ.

— Կարիկ ջան, գնա՛ անտառէն քիչ մը մորի բեր, բայց տե՛ս, հեռու չերթաս, կը մոլորուիս։

— Չէ՛, տատիկ ջան, հեռու չեմ՝ երթար, — ըսաւ Կարիկը, առաւ իր փոքրիկ զամբիւղն ու գնաց։

Քիչ յետոյ Կարիկը անտառ հասաւ։ Ինչքա՛ն լաւ էր անտառը, այնքան շատ ծաղիկներ կային, այնպէս պայծառ էր փայլուն արեգակը։

«Քիչ մը ծաղիկ քաղեմ, յետոյ մօրու ժողվելու կ'երթամ» — մտածեց Կարիկը, զամբիւղը թողուց թուփի մը տակ ու կամաց-կամաց առաջ գնաց։

Այդ ժամանակ վայրի վարդենիի թուփէն թռաւ փոքրիկ կարմիր կատարով ծիտիկ մը։ «Ծըտ-ծըտ», — ծրլաց ծիտիկը, թռաւ միւս թուփին։ Կարիկը վազեց անոր ետեւէն։

«Ծըտ-ծըտ», — նորէն ծրլլաց ծիտիկն ու թռաւ։ Այսպէս եր-

— Կուկուլիկ կու,
Աս ո՞ւր գնաց, ո՞ւր եկաւ,
Սա՛ կպրոսք պարապ եկաւ,
Սպիտակ գնաց, սեւ եկաւ,
Սիրուն գնաց, դեւ եկաւ,
Ելէ՛ք տեսէք, ո՞վ եկաւ.
Նա մեզ չի տար ջուր ու կուտ,
Կուկուլիկ կու, հաւ ու հուտ։

Ու այսպէս աշխատասէր աղջիկը, ոսկեմազիկ, գեղեցիկ աղջիկ դարձաւ, ծոյլ աղջիկը մնաց կպրոտ և տգեղ, Քանի՛ քանի՛ անգամներ զինքը լողցուցին. օգուտ չըրաւ։ Նոյն կուպրն էր, նոյն կպրոտը մնաց։

կա՛ր ժամանակ, ծիտիկը թուփէ թուփ, ճիւղէ ճիւղ կը թռչկոտէր, իսկ Կարիկն ալ ետեւէն կը վազվզէր: Իսկ երբ ծիտիկը թռաւ հեռո՛ւ, հեռո՛ւ, Կարիկը տեսաւ, որ արդէն արեւը մարը կը մտնէ: Չորս կողմը նայեցաւ, անծանօթ անտառին խորն էր գացեր: Հար գայլի ոռնոցը հեռուէն կը լսուէր, իսկ մօտիկ ծառին վրայէն կը կունէր:

— Կո՛ւ-կո՛ւ, կու-կո՛ւ:

— Վա՛յ, մայրիկ ջան, այս ո՛ւր եմ եկեր, վա՛յ, վա՛յ— սկսաւ լալ Կարիկը, հոս վազեց, հոն վազեց, յոգնած պառկեցաւ ծառի մը տակ քնացաւ,

Տատիկը, որ իր սիրունիկ Կարիկին ուշանալը տեսաւ, առաւ իր ձեռքի գաւազանը ու գնաց անտառ: Գնա՛ց, գնաց, տեսաւ թուփի մը տակ քնացած է Կարիկի պարապ զամբիւղը:

— Ա՛խ, Կարիկ ջան, վա՛յ, բալիկ ջան, ո՛ւր գացիր,— ըսելով ձեռքը ծունկին զարկաւ և թուփին տակ նստելով սկսաւ լալ:

Մէկէն հո՛ւպ, ցատկելով, մօտեցաւ նապաստակ մայրիկը, իր ձագուկին ձեռքէն բռնած:

— Ինչո՞ւ կուլաս, տատի ջան:

— Հապա ինչպէ՛ս չի լամ: Առաւօտուն իմ փոքրիկ Կարիկս մորու քաղելու գնաց ու դեռ ետ չեկաւ: Այս ալ իր պարապ զամբիւղն է:

— Ալ մի՛ լար, տատիկ ջան, վեր ելիր, երթանք, տեսնենք թէ ո՛ւր է քու սիրուն Կարիկը:

Գացին:

Ճամբան փոքրիկ եղնիկի մը հանդիպեցան:

— Տատի՛կ, այսպէս տխուր ո՛ւր կ'երթաս:

— Առաւօտուն անտառ եկաւ իմ Կարիկն ու ալ ետ չդարձաւ: Այս ալ իր պարապ զամբիւղն է, կ'երթանք փնտռելու:

— Ես ալ կուգամ:

Ու գացին:

Թուփին տակ, շուքին արջ մայրիկը կը խաղար իր քոթոթին հետ: Եկողները տեսածին պէս, հարցուց.

— Այպէս տխուր, ո՛ւր կ'երթաս, տատի ջան:

— Առաւօտուն իմ Կարիկը մորու ժողվելու եկաւ ու ալ ետ չդարձաւ: Ահա իր պարապ զամբիւղը. կ'երթանք փնտռելու:

— Ես ալ կուգամ,— ըսաւ արջը և իր փոքրիկին հետ միացաւ անոնց:

Գացի՛ն, գացի՛ն, թուփերու մէջ նայելով, կանչեցին:

— Կարի՛կ, Կարի՛կ:

ԱՆՎԱԽ ՏՂԱՆ



ՍԱՐԻԲՆ

Մի փոքրիկ տղայ
Գնաց, որ խաղայ
Պարտէզում ծաղկած.
Նրա ոտքի տակ
Մի սեւ օձի ծագ
Օղակուեց յանկարծ:

Տղան լաց չեղաւ,
Ետ-ետ չփախաւ
Ոնց վախկոտ ճագար.
Գետին կռացաւ.
Արագ բարձրացաւ,
Ձեռքին մի մեծ քար:

Օձը բարկացաւ,
Խայթել ցանկացաւ
Դաջ երախային,
Բայց քարն ուժ առաւ
Ու թափով իջաւ
Սողունի գլխին:

Սատկեց թունաւոր
Խայթելու սովոր
Իժը խորամանկ,
Իսկ անվախ տղան
Հեծաւ ու քշեց
Փայտէ ձին արագ:




Իսկ Կարիկը չկայ ու չկայ: Ծառին տակ նստան ու սկսան լալ:
Այդ ծառին վրան, սկիւռ մը նստած կաղին կը կրծէր. վար նա-
յեցաւ ու ըսաւ.

— Ինչո՞ւ ալ դպէս կուլաք:

— Առաւօտուն մօրու ժողվելու եկաւ իմ փոքրիկ Կարիկն ու
ալ չեկաւ: Հո՞ս ինկանք, հո՞ն ինկանք, բայց Կարիկը չկայ ու չկայ:

— Սպասեցէ՛ք, վերէն նայիմ, — ըսաւ սկիւռը. ցատկեց ծա-
ռի կատարը, այս կողմ նայեցաւ, այն կողմ նայեցաւ և պառաւին
պսռաց:

Դրոյկս նկարագարողուած է մեր խոսմանալից սաներէն:
ՊԵՐՃ ՄԵԼԻՔԵԱՆԻ կողմէ:



ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԸ

Երեւանէն վաթսուն քիլոմէթր հեռու, բա՛րձր-բարձր լեռներով շրջապատուած լեռնային մեծ լիճ մըն է Սեւանը, ծովէն 1916 մէթր բարձր։ Անոր երկարութիւնը 75 քիլոմէթր է, իսկ ամենէն լայն տեղը՝ 37 քիլոմէթր։ Խորութիւնը մինչեւ 100 մէթրի կը հասնի։ Լիճը ունի տեսակ տեսակ ձուկեր, որոնցմէ հռչակաւոր է իշխանածուկը։

Սեւանը շրջապատուած է լեռներով։ Գեղամա, լեռնաշղթան այդ լեռներուն ամենաբարձրն է, որուն Աժտահակ կոչուած գագաթը 3000 մէթր բարձր է։ Այս լեռները անտառներով ծածկուած են։ Ձմեռը չափ ցուրտ, իսկ ամառն ալ մեղմ օդ մը կ'ընէ։ Անձրեւները ժամանակին կը տեղան։

— Ահա՛, ահա՛ միւր Կարիկը,
Ծեր տաթիկի միւր թոռնիկը,
Քուն է մօտ ծառիս տակ,
Ոչ բարձ ունի, ոչ վերմակ։

Այս ըսաւ ու ծառէն իջաւ։ Բոլորը միասին գացին հասան մեծ ծառին, Կարիկին արթնցուցին և ուրախ-ուրախ տուն դարձան։

Մ. ՄԵՀՐԱՅԵԱՆ

Այս լեռներէն դէպի Սեան կը թափին քանգըլեց (26) գետեր։
 Միակ գետ մը՝ Զանգուն, ծնունդ կ'առնէ Սեւանէն և մեծ ու-
 ժով ցած, դէպի Երեւան կը հոսի, հետը տանելով այդ քսանըվեց
 գետերուն բերած ջուրին մէկ մասը։ որուն մնացեալն ալ կը շոգիա-
 նայ, Զանգու գետին ջուրը քիչ է։ Մեր հայրենիքի գիտնականե-
 րը հաշիւ ըրին որ, եթէ Զանգու գետը Սեւանէն աւելի ցաւ ջուր
 ստանայ և այդ բարձր տեղէն աւելի մեծ ուժով վար թափի, վար
 հոսի, այն ժամանակ այդ վար թափուող ջուրին ուժը կարելի է
 օգտակար կերպով գործածել։ Եւ այս նպատակաւ ալ Զանգուի ա-
 կունքին մօտ, շինեցին հակայ ջրաելեկտրակայան մը որ գետնին
 տակն է. ստորերկեայ է, և մինչեւ 110 մէթր պէտք է վար իջնել
 հասնելու համար գործիքներուն մօտ։ Այդ տեղ կան զոյգ մը ՏՈՒՐ-
 պիւններ, որոնց մէջէն Սեւանէն եկած ջուրը կ'անցնի, և շարժման մէջ
 կը դնէ ելեկտրական ոյժ արտադրող գործիքները, որոնց ժէնէրա-
 քոռ անունը կուտան։ Այսպէս Սեւանէն առնուած ջուրը Տուրպիւն-
 ներու մէջէն անցնելով ելեկտրականութիւն արտադրող ժէնէրա-
 թոռները շարժման մէջ կը դնէ, և անցնելով գետնին տակէն,
 550) մէթր երկարութեամբ գետնուղիէն, կ'երթայ ու կը միանայ
 Զանգու գետին։ Յառաջ եկած ելեքտրականութիւնը, լարերու մի-
 ջոցաւ կը փոխադրուի մօտակայ գիւղերը, քաղաքները լուսաւորելու
 և գործարաններն ու հանքերը, աշխատանքը դիւրացնելու համար։
 Զանգու գետի ավին արդէն շինուելու վրայ են ուրիշ ջրա-
 ելեկտրակայաններ, որոնցմէ Զանգուի ջուրը դարձեալ պիտի անց-
 նի, հաստատուած տուրպիւնները շարժէ, ծնունդ տալով ելեկտրական
 նոր ոյժի, որ պիտի օգտագործուի գործարաններու, հանքերու ա-
 գարակներու մէջ, բնակարանները, պետական շէնքերը, պանդոկնե-
 րը տաքցնելու համար։

Ելեքտրական ոյժը որքան շատնայ, այնքան մեծ չափով մեր
 երկիրը կը հարստանայ. կը շինուին նոր գործարաններ, կը շար-
 ժին ելեքտրական գնացքները, հանրակառքերը, արուեստական քա-
 ուշուի գործարանը կը քառապատկէ իր արտադրութիւնը, պղինձի
 հանքերը կամ տուֆի քարահանքերը երեք անգամ աւելի արդիւնք
 կուտան. և վերջապէս մեր երկրի բոլոր քաղաքները և գիւղերը
 կը լուսաւորենք և կը տաքցնենք ելեքտրականութեամբ։ Սեւանի
 ջուրը կ'երթայ նաև ոռոգելու մեր դաշտերը և այգիները, որոնք
 չոր ու անբերրի էին բայց շնորհիւ կենարար ջուրին, կը ծաղկին,
 կը պտղաբերին։

Սեւանայ լիճին մէջ կղզի մը կայ (որ հիմա թերակղզի է այ-
 լևս, ջուրերուն քաշուած ըլլալուն պատճառաւ), ուր շինուած է 874

ԽԵԼԱՑԻ ՇՈՒՆԸ

ՈՐՍՈՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օր մը ընկերս ինձի խորհուրդ տուաւ որ դէպի այն բլուրներուն կողմը երթամ, ուր միշտ նապաստակ որսալ կարելի է:

Գացի: Բլուրին ստորոտի թուփերուն տակէն շունս՝ Տապորը, նապաստակ մը հալածեց: Անմիջապէս որ նապաստակը նշմարեցի, հրացանս բարձրացուցի և կրակեցի: Գնդակը ոտքին դպաւ և վիրաւորեց:

Նապաստակը փախաւ երեք ոտքով: շունս ալ ետեւէն վազեց: Թուփի մը տակ նստած, ափսոս, ինչպէս նապաստակը փախցուցի կ'ըսէի ես-ինծի:

Բաւական ժամանակ անցնելէ յետոյ ձայն մը լսեցի: Ետ դարձայ: շունս էր, վիրաւոր նապաստակը բերանին: Ահագին նապաստակ մը:

Կենդանիին ծանրութենէն շունս շնչասպառ եղած էր, որովհետեւ որսը բերնին մէջ բարձր բռնած կը բերէր, Հեիհն հասաւ, նապաստակը գիրկս դրաւ և ուրախ նայուածք մը նետեց վրաս, կարծես կը հարցնէր՝ «գո՞հ ես, ահա փախցուցած նապաստակդ...»:

Նապաստակը առի, շուրջի և սկսաւ մտածել, մորթել թէ ողջ ողջ տուն տանիլ: Այդ ժամանակ նապաստակը յանկարծ գիրկէս ցատկեց ու սլացաւ դէպի բլուրին լանջքն ի վեր:

Շունս յանդիմանական նայուածք մը վրաս նետեց և նապաստակին ետեւէն վազեց: Խեղճը շատ յոգնած էր և այս անգամ իր դժգոհութիւնը ինձմէ շէր կրնար ծածկել:

Արդեօք Տապորը կենդանիին ետեւէն կը հասնի՞. չէ՞ որ մէկը կը վազէր իր տիրոջը գոհունակութիւն պատճառելու, իսկ միւսը՝ իր

թուակամին հոյակապ վանք մը: Մեր հայրենիքը այցելող բոլոր օտար գիտնականները կ'այցելեն նաև Սեւանի վանքը: Սեւան կըզգիրն մէջ կայ նաև Հանգիսի Տունը, ուր հանգստանալու կուգան Հայաստանի գրագէտները: Այժմ բնակելի նոր շէնքեր շինուած են կղզին ամէն կողմը:

ՀԱՆԵԼՈՒԿ



1. — Երախաները հաւաքուեր էին Պապին չորս կողմը եւ կը գուար-
ճանային:

— Ո՞վ կրնայ, — հարցուց Պապը, շաբթուան 5 օրերը անուանել
առանց ըսելու երկուշաբթի, երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի,
Ուրբաթ եւն:

Երախաները շատ մտածեցին բայց չկրցան գտնել: Ի վերջոյ Պապը
բացատրեց:

— Շատ պարզ է, ափսոս որ չէք գիտեր: — ?

2. — Համեղ պտուղ մըն եմ հնգատառ, երբ գլուխս վերցնէք, կը
կը դառնամ մարմին, առաջին երեք գիրերս կը կազմեն շրջանակ. իսկ
վերջին երկու տառերս՝ անծնական դերանուն:

կեանքը փրկելու համար: Ինչպէս ալ նապաստակը վազեր, Տապո-
րըս արդէն հասնելու վրայ էր: Ահա՛ քիչ մնաց: Քանի մը քայլ
միայն: Վերջապէս յաջողեցաւ նապաստակը բռնել: Դարձեալ բեր-
նին մէջ բարձր բռնած, ան կը ճեղքէր ծնկահաս խոտը և դժուարու-
թեամբ կը յառաջանար՝ խոտի ծովին մէջ, անոր մէջքը մերթ կ'ե-
րեար, մերթ անտեսանելի կ'ըլլար:

Բայց դէպի իմ կողմս կուգար, գլուխը միշտ բարձր:

Եո ընդառաջ գացի, որ որսին տէր ըլլամ: Սակայն նա կանգ
առաւ և բարկացած ինծի նայեցաւ: Իրեն մօտեցայ:

— Տո՛ւր ինծի:

Նա ետ-ետ գնաց և վրդովուած, մրմուռով, չտուաւ:

Ես անոր խելացի աչքերսն մէջ արդար զայրոյթ տեսայ և
կարդացի իր նախատինքի խօսքերը:

— Տամ, որ նորէ՞ն փախցնես... Դուն գիտես՞ թէ ինչ չար-
չարանքով անոր ետեէն հասայ և ի՞նչ տանջանքով զայն բերի...:

— Տապո՛ր, — ըսի անոր մեղմութեամբ — այս անգամ նե-
րողամիտ եղիր: ալիս չեմ փախցնել: Նապաստակը ինծի տո՛ւր:

Բայց Տապոր, խորթ խորթ ինծի նայեցաւ և նապաստակը
չտուաւ:

— Ալ չեմ փախցնել, տո՛ւր, ըսի և դանակս հանեցի:

Հասկցաւ Տեսած էր և գիտէր թէ ինչի համար է այդ պսպղուն
գործիքը և թէ և դժուարութեամբ, բայց համաձայնեցաւ որսը ինծի
յանձնել:

ՍՈՒՍԱԿԸ ՎԱՆԴԱԿԻ ՄԷՋ



ԽՆԿՈ ԱՊԵՐ


— Ինչո՞ւ իմ սոխակ,
Չես ուտում կերդ՝
Ինչո՞ւ չես ասում
Անուշ երգերդ:

— Երգում էի ես
ձիւղիցը դալար.
Ոսկէ վանդակում
Լուռ եմ միալար:

Դալար հղճիկը
Ասում է՝ ապրի
Ոսկէ վանդակը
Ասում է՝ մեռի:

Ընկես նիւղից
Ոնձ է ափսոսում,
Չագերից գրկուած,
Ես երգ չեմ ասում:

— Բաց կանեմ սոխակ
Դուռը վանդակիդ,
Թելիդ տուր, թւի՛ր,
Հասիւր ձագերիդ:




ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ



1. — Թերթեր ունի
Ծաղիկ չէ.
Կարուած է, բայց
Շապիկ չէ,
Բան է պահում
Բայց մարդ չէ:

2. — Թելեր ունի
Բայց նա երբէք
Չի թռչում.
Ոսկեր չունի
Բայց արագ է
Նա փախչում:



Մի գարնան իրիկուն դրանը նստած զրոյց էինք անում, երբ այս դէպքը պատահեց: Էս դէպքից յետոյ ես չեմ մոռանում էն գարնան իրիկունը:

Ծիծեռնակը բուն էր շինել մեր սրահի օճորում (քիւին տակ): Ամէն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալիս, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի ոճորքին (քիւին):

Եւ գարունն էր բացւում եւ մեր սրտերն էին բացւում, հենց որ նա իր զուարթ ճիչով յայտնւում էր մեր գիւղում, ու մեր կտուրի տակ,

եւ ի՞նչ քաղցր էր, երբ առաւօտները նա ծլվլում էր մեր երգիքին, կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շարւում էին մի երկար ձողի վրայ ու Վարդում իրիկնաժամը:

Եւ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բունը: Զու էր ածել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին:

Էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկաւ, կտցումը կերակուր բերաւ ճուտերի համար: Ճուտերը ճվճվալով բնից դուրս հանեցին դեղին կտուցները:

Էդ ժամանակ, ինչպէս եղաւ, նրանցից մինը, գուցէ ամենից անզգոյշ կամ ամենից սովածը, շտապեց, աւելի դուրս ցցուեց բնից ու ընկաւ ներքեւ:

Մայրը ճչաց ու ցած թռաւ ճուտի ետեւից: Բայց հենց էդ վայրկեանին, որտեղից որ էր, դուրս պրծաւ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուտը:

— Փիշտ, փիշտ, — վեր թռանք ամէնքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկաւ կատուի ետեւից՝ նրա շուրջը թրթռալով ու կրտցահարելով, բայց չեղաւ: Կատուն փախաւ, մտաւ ամբարի տակը: Եւ այս ամէնն այնպէս արագ կատարուեց, որ անկարելի էր մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեսներս, մի-մի փայտ առած պտտում էինք ամբարի

ՔԱՋ ԽՈՐՈՋԸ

— 1 —

Փոքրիկ աքլոր մը, որուն խորոզ անունը տուած էին բակին մէջ, այն կարծիքը ունէր իր մասին, թէ աշխարհն ու մարդիկը ինքն է որ կը կառավարէ:

Այսպէս, ան կը մտածէր թէ, ինքը եթէ «կուկուլիկու» չըկանչէ, մարդիկ քնացած մնալով չեն արթննար կամ արեւը չի ծագիր ու աշխարհ կը մնայ մութի, խաւարի մէջ:

— Այդ ես եմ, — կը մտածէր մեր աքլորը, որ կեանք ու լոյս կուտամ աշխարհին: Բայց մարդիկ յարգս չեն գիտեր, ու յարգ ու պատիւ չեն ընծայեր ինծի:

Եւ ահա, օր մըն ալ, մարդոցմէ դժգոհ մեր խորոզը, զանոնք պատժելու համար որոշեց այլևս «կուկուլիկու» չկանչել, որպէս զի ոչ մարդիկ արթննան, սչ ալ արեւը ծագի:

Երբ գիշերուան մէջ, «կուկուլիկու» կանչելու առաջին ժամը եկաւ, ան կոկորդը սեղմեց, թառին կպաւ որպէս զի ո՛չ մէկ շարժում չընէ, ձայն չհանէ: Նոյնը ըրաւ «կուկուլիկու» կանչելու երկըրորդ ժամուն, երրորդ ժամուն և չարամտութեամբ մտածեց:

— Դէ՛, հիմա գացէ՛ք քնացած մնացէ՛ք, չար մարդիկ...:

Բայց... Կրնա՞ք երեակայել իր զարմանքը, առաւօտուն երբ

տակը, մինչ կատուն դուրս եկաւ ու փախաւ դէպի մարագը դունչը լիզելով:

Երիծեռնակը դատարկ կատուն որ տեսաւ, մի զիլ ծղրտաց ու թռաւ, իջաւ դիմացի ծառի ճիւղին: Այնտեղ լուռ վեր եկաւ: Մին էլ տեսանք յանկարծ ցած ընկաւ մի քարի կտորի նման, վազեցինք, տեսանք՝ մեռած ընկած է ծառի տակին:

Մի դարնան իրիկուն էր, որ այս դէպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այն դարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացայ, որ Երիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է, ինչպէս մերը:

ինք տակաւին թառին վրայ էր, լսեց որ մարդիկ արթնցած, արդէն գործի են լծուած, իսկ քիչ վերջն ալ, արեւը ծագեցաւ և աշխարհը իր յոյսով ողորկեց:

«Աս ի՞նչ բան է», մտածեց Խորոզը զարմացաց:

— 2 —

Հաւերուն հազիւ թէ մօտեցած էր, նշմարեց որ անոնք բոլորն ալ վզերնին մէկ կողմ ծռած, մէկ աչքով երկինք կը նային:

Ինքն ալ նայեցաւ:

— Արծիւ է, արծիւ է, — ըսին հաւերը — տեսէ՛ք ինչքա՞ն բարձրէն կը թռչի:

— Ինչո՞ւ այդքան կը զարմանաք — ըսաւ Խորոզը. եթէ ուզեմ ես ալ այդպէս կը թռչիմ:

— Ձե՛ս կրնար — ըսաւ պառաւ սև հաւ մը, Դուն ո՛ւր, արծիւը ո՛ւր:

Խորոզը խնդաց հաւերուն վրայ:

— Սպասեցէ՛ք սա տան կառուրը բարձրանամ, ու պիտի տեսնէք թէ ինչպէ՞ս կը թռչիմ — ըսաւ ու արագ արագ բարձրացաւ կտուրը:

Բարձրացաւ ու թռելերը բացաւ որ թափ առնէ ու թռչի:

Ու թռտւ... Բայց փոխանակ վեր թռչելու, բակը ինկաւ:

— Ձեղա՛ւ, կտուրը յարմար չէր, — ըսաւ պարծենկոտը ու նորէն հաւերուն մօտ գնաց:

— 3 —

Նոր մօտեցած էր հաւերուն, երբ նկատեց թէ քանի մը սագեր, իրենց ձագուկներով մօտակայ գետակին մէջ կը լողան:

Մեր Խորոզին շատ հաճելի թուեցաւ անոնց լողանքը:

— Երթանք, մենք ալ լողնանք — ըսաւ հաւերուն:

— Մենք չենք կրնար լողալ, — ըսաւ դարձեալ պառաւ սև հաւը:

— Դո՛ւք վախկոտներ էք, — ըսաւ Խորոզը և գոռոզ-գոռոզ գնաց դէպի լայն առուն:

Բայց ոտքը ջուրը դրաւ թէ չէ, զգաց որ դէպի վար կ'երթայ: Այդ ժամանակ լողացող սագերէն մէկն ալ, կտուցը երկարած՝ վրան յարձակեցաւ:

Եւ մեր Խորոզը վախէն թռաւ և ինքզինքը գետափը նետեց:

— Քեզի ըսի որ ջուրը չմտնես — ըսաւ պառաւ հաւը:

— Եթէ սաղը չխանդարէր, պիտի տեսնէիր թէ ի՞նչպէս կը լողամբ։ Բայց սպասէ՛, սա փետուրներս անգամ մը չորցնեմ...

— 4 —

Փետուրները չորցնելու համար ան բարձրացաւ հաւնոցին կտուրը, և հաղիւ թէ՛ բարձրացած, յանկարծ նկատեց իր շուքը մեծ, ահագի՛ն, որ գետնին վրայ փռուած էր։

«Ես որ այսքան մեծ եմ, հապա ինչո՞ւ մարդիկներէն, կովերէն, այծերէն և շուններէն կը վախնամ» ըսաւ մտքէն։ Այս մտածմունքին մէջ, յանկարծ նշմարեց որ, տան տիրուհին հացի կտորուանքները աօրաւ և կապուած շան առջեւը նետեց։

Այս տեսաւ թէ չէ, կտուրէն իջաւ և հաւերուն մօտենալով ըսաւ.

— Երթա՛նք, հացը շունէն խլենք։

— Այդպէս բան չընես — ըսաւ պառաւ սև հաւը. Գունը քեզ կը խածնէ։

— Դուք վախկոտներ է՛ք, շունը ի՞նչ է որ ես անկից վախնամ — ըսաւ ու մինակը գնաց շան խշտիկը մտաւ։ Սակայն մըտած էր, չէր մտած, շունը հա՞ջ ըրաւ ու բռնեց անոր պոչէն։ Մեր խորոզն ալ ինքզինքը դուրս նետեց, պոչի փետուրները շան բերանը ձգելով։

— Քեզի ըսի՞ որ չերթաս,— ըսաւ պառաւ սև հաւը։

— Եթէ տեղը լայն ըլլար, ես անոր ցոյց կուտայի,— պատասխանեց մեր ինքնահաւանը։

— 5 —

Պոչին կորուստը խորոզին շատ վիշտ պատճառեց։ Ուղեց նոյն-իսկ լալ. բայց ինքզինքը զսպեց, ի՞նչ պիտի ըսեն հաւերը իր լացը տեսնելով.

Ու փափաքեցաւ որ, ոչ միայն քաջ երեւայ, այլ նաև այն-պիսի քաջութիւն մը ընէ որ հաւերն ալ զարմացնէ. ու այդ միջոցին նկատեց, որ բակին մէջ, իր և հաւերուն յատուկ տեղը՝ մօխերի վրայ օճախ են շինել և կրակը բոցավառ կը վառի։

Մեր խորոզին արժանապատուութիւնը վիրաւորուեցաւ, որովհետև առանց իրեն հարցնելու, իրենց տեղը կրակ վառել էին։

— Երթա՛նք այդ կրակը մարենք, ըսաւ հաւերուն։

— Մենք կրակ չենք կրնար մարել,— ըսաւ պառաւ սև հաւը. այդ դժուար բան է. կրակ է կը վառի։

— Դո՛ւք վախկոտներ էք, — բարկացաւ Խորոզը և յարձակեցաւ կրակին վրայ. որ անմիջապէս մարէ։

Բայց կրակին մօտենալուն պէս, խանձի հոտ զգաց ու ետ ցատկեց։ Թեւերուն և վզի փետուրները վառեցան և մեր Խորոզը գրեթէ փետրաթափ եղաւ, ողորմելի վիճակի մը մատնուեցաւ։

Ու իր տեսքը այնպէս կորսնցուց որ, հաւերը ալլէս չէին կրրնար զանազանել թէ ան հա՞ւ է թէ աքլոր։ Եւ իր այս վիճակէն ամենէն աւելի տանջուողը ինքը՝ Խորոզն էր։ Խնդրինքը դէշ դրուած թեան մէջ կը գտնէր, և շարունակ կը մտածէր թէ ի՞նչ ընելու է որ փետուրները նորէն դուրս գան։

— 6 —

Շատ մտածելէ վերջ, որոշեց որ գիշերը մնայ հաւնոցին կտուրը, որպէսզի փետուրները շուտ դուրս գան։

Ձեռ գիտեր ինչու ան կը խորհէր թէ հաւնոցին ներսը փետուրները չեն ածիր, իսկ դուրսը, օդին մէջ, շուտ կը մեծնան։

Պառաւ սեւ հաւը և առ հասարակ բոլոր հաւերը խորհուրդ տուին որ այդ բանը չընէ,

— Դուրսը մի՛ մնար, — ըսաւ սեւ հաւը, — փորձանք կը պատահի։

— Ձէ՛, — ըսաւ Խորոզը, — ես կ'ուզեմ որ փետուրներս շուտ ածին, որպէսզի կարենամ գետի մէջ լողալ և շունէն վրէժ լուծեմ։

Ու գնաց բարձրացաւ հաւնոցին կտուրը։ Իսկ հաւերը մէկիկ մէկիկ, իրարու ետեւէն կարգով մտան հաւնոց թառելու և քնանալու համար...

Շատ քնացած էին թէ քիչ, դիշերուայ մէկ պահուն լսեցին Խորոզին սուր ճիչը, որ իսկույն անլսելի մնաց։ Չհասկցան թէ ի՞նչ պատահեցաւ առաւօտուն միայն իմացան որ աղուէսը զայն տարած էր, մնացած փետուրները բակին մէջ ցրուելով։

ՍՏ. ԶՕՐԵԱՆ

ԾՈՒՏԱՍԵԼԻՔ



Շաւարշը Շաւարշանի սեւ շէխին սեւ շունը շալակը շալկած շարունակելով շորջանակին շուրջը շտապով շրջեցաւ։

Սրբան

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՍԻՒՆԱԿԸ

ԿԱՂԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Շուշանիկ ու Շաւարշիկ, սովորականէն կանուխ արթնցան այդ առաւօտ: Անուշիկ մայրիկը, երէկ ըսած էր իրենց թէ վաղը կաղանդ է: փոքրիկները իրենց խոշոր աչքերը լայնօրէն բանալով հարցուցած էին մայրիկին թէ ի՞նչ ըսել է կաղանդ. ան ալ, զանոնք իր ծունկերուն վրայ առնելով,

— Իմ անուշիկ պզտիկներս, ըսած էր անոնց, կաղանդը բարի պէ՛պէքներուն համար ուրախութեան օր մըն է: Այդ օրն է որ անոնք կը վարձատրուին Կաղանդ Պապային կողմէ. մայրիկը ցոյց տուած էր անոնց նկար մը. — կաս-կարմիր հագուած ծերուկ մը, ճերմակ ու երկար մօրուքով, ձեռքին գաւազան մը. եւ ուսին խոշոր տոպրակ մը որուն բաց շերտնէն դուրս կը թափէին պիսպիսուն խաղալիկներ:

— Ահաւասիկ Կաղանդ Պապան. անիկա շատ կը սիրէ փոքրիկները — անշուշտ բարիները — ու ամէն նոր տարւոյ սկիզբը, երկա՛ր ճամբորդութիւն մը ընելով ծիւնոտ լեռներու վրայէն, կը վերադառնայ իր սիրելի պզտիկներուն քով, ու անոնց կը բերէ աղուո՛ր աղուոր նուէրներ: Եւ հիմա իմ մինիսիկ ծագուկներս, հիմա հասկցա՛ք թէ ի՞նչ ըսել է «Կաղանդ»:

Փոքրիկները, որոնք մեծ հետաքրքրութեամբ մտիկ ըրած էին մայրիկին խօսքերը, ըսին մտահոգ.

— Կաղանդ Պապան մեզի ալ պիտի գա՞յ արդեօք...

Ու իրենց նօնօշիկ ու վարդագոյն երեսները մօտեցնելով մայրիկին այտերուն, կէս մը շփացած ու կէս մը աղաչական՝

Աղուո՛ր մայրիկ, Կաղանդ Պապային պիտի ըսե՞ս որ մենք բարի էինք ամբողջ տարին... որպէսզի մեզի ալ խաղալիկ բերէ...

Ու մայրիկը՝

Սիրունիկներս. ատիկա Կաղանդ Պապան է որ պիտի որոշէ. ան ինծմէ լաւ գիտէ բարի պզտիկները ուրախացնել. հիմա գացէք քնանալու, որպէսզի առաւօտուն կանուխէն արթննաք:

Անոնք մեծ խանդավառութեամբ, իրենց փոքրիկ մարմինները նետած էին տաքուկ անկողիսին մէջ ու խօսած երկարօրէն վաղուան մասին, մինչեւ որ իրենց կոպերը միացած էին իրարու, քունին առթած ծանրութենէն:

Ու ամբողջ գիշերը, անոնց փոքրիկ գլուխներուն մէջ կազմուած էին շա՛տ ու շա՛տ պատկերներ կաղանդի, ծնած՝ իրենց խոշոր երեւակայութենէն:

Ու հիմա, վերջապէս առաւօտ եղած էր:

Հայրիկին ու մայրիկին սենեակը՝ բաժնուած իրենցմէ դուռով մը միայն՝ ոչ մէկ ծայն. ուրեմն տակաւին կը քնանային անոնք:

Շուշիկ ու Շաւարշ, իրենց ծնոյքը չ'արթնցնելու մտահոգութեամբ առանց աղմուկի անկողիսէն ելլելով, սպրդեցան դուրս, մինչ իրենց փոքրիկ ու մերկ տոտիկները կը մխրճուէին հաստ ու կակուղ գորգին մէջ:

Հիւրասենեակին դրան առջեւ՝ կանգ առին յանկարծ... Եւ գոյնե՛ր, այս որբա՛ն գոյներ կը ցոլային ներսէն:

Անկիւնը, մեծ, կանաչ ծառ մը, բեռնաւորուած պզտիկ խաղալիկներով...

Ճիւղերուն ծայրերը՝ մոմեր գունաւոր...

Կապաթը ծառին՝ պոչաւոր ու ոսկեգօծ աստղ մը մեծ...

Ու այս ամէնուն վրայ իջած՝ թափանցիկ սպիտակութիւն մը...

Մինչ Շուշիկ, իր շունը բռնած, հիացումով կը դիտէր այս զարմանալի ու գեղեցիկ տեսարանը, Շաւարշիկ աչքերը կը յառէր առաստաղին, Ո՛հ ան ալ զարդարուած էր... Անոր չորս անկիւններէն վար կը սահէին կարմիր ու կապոյտ թղթէ օղակներու շարաններ ու կը միանային մէջտեղէն վար կախուած քահին շուրջ. ինչ աղուոր էր...

Հապա պատե՞րը...

Հո՛ս աղուոր սրճագոյն սահնակ մը որ կը սահի սպիտակ ձիւնին վրայէն, ու վրան... այո ահա՛... աղուոր մայրիկին ըսած Կաղանդ Պապան է նստած... ու իր քով բազմած իր խոստմնալից տոպրակը...

Հոն՝ կարմիր ու կապոյտ զանգակներ... կանանչ տերեւիկներ, որոնք կը կրեն կարմրորակ գնդիկներ... ու լապտերներ... մուճակներ..., բոլորն ալ շլացուցիչ գոյներով...

Հիմա կը գտնուէին սենեակին մէջ.

Շաւարշիկ որքա՛ն կը փափաքէր իր թաթիկը երկարել ու փրցնել այդ աղուոր օդանաւը, որ ծառին վրայէն զինք կը դիտէր յաղթական.

Ու մինչ փոքրիկ մատիկներուն վրայ բարձրանալով կը ջանար յափըշտակել այդ գրաւիչ առարկան, յանկարծ Շուշանիկ ըսաւ իրեն.

Շաւարշիկ. յիշէ որ եթէ բարի չկենանք, Կաղանդ Պապան մեզի խաղալիկ պիտի չբերէ, ուրեմն աւելի լաւ է որ չդպչիս ծառին.

Շաւարշիկի ականարկը հանդիպած էր Շուշանիկի ականարկին, որը այդ վայրկեանին շատ խիստ էր... ու գերագոյն ճիգով մը ետ քաշեց իր անհնազանդ թաթիկը. ըսելով՝

— Իրաւունք ունիս Շուշանիկ՝ պիտի չդպչիմ այլեւս ծառին.

Երկու պզտիկները զբաղուած ըլլալով այս խօսակցութեամբ, չէին նշմարած որ գոյգ մը խանդաղատագին նայուածքներ յառած էին իրենց. Արդարեւ մայրիկն ու հայրիկը դրան սեմին՝ ուշի ուշով կը դիտէին իրենց երկու սիրասուն ծագուկները.

Ու անոնք չէին կրցած զսպել իրենց խնդուքը. ի տես Շուշանիկին, որ իր մատիկը օդին մէջ շարժելով կ'ազդարարէր իր եղբօրը, հանդարտ կենալ...

Ու մայրիկը ըսաւ, մօտենալով իր ծագուկներուն.

— Իմ սիրունիկ երախաներուս այս ընթացքը շատ գոհ կը ձգէ զիս. Դուք շատ բարի պզտիկներ էք, ու մենք վստահ ենք որ Կաղանդ Պապան անպայման պիտի այցելէ հոս, ու վարձատրէ ձեզի աղուոր նրէրներով.

Ու հիմա, — շարունակեց հայրիկը. — իր բազուկներուն մէջ սեղմելով իր գաւակները — գացէք պատրաստուեցէք պատշաճօրէն ընդունելու համար «Կաղանդ Պապան»:

Ու ձգեց որ անոնք խանդավառ դուրս վազէին սենեակէն, բոպիկ տօտիկներով. մինչ իրենց թաթիկները կը ծափէին եւ ուրախ ծիծաղով կը լեցնէին ամբողջ տունը.

Մայրիկն ու հայրիկը կը ժպտէին, յուզուած. Անոնք կը լսէին իրենց հոգեհատորներուն ուրախ ճռուողիւնը, եւ ձեռք ձեռքի կ'ուղղուէին դէպի ընդունելութեան սենեակը...

ՍՐԲՈՒՀԻ ՇԱՔԱՐԵԱՆ

ԱՐՋՈՒԿՆ ՈՒ ՎԱՐԴԵ

Վ. ԴԱՐԲԵՆԻ



Մի անհանգիստ արջի փոքր
Կանգնեց չմնաղ վարդենու մօտ
Եւ գարմանով դիմեց վարդին.
— Ինչո՞ւ եմ եեզ սիրում մարդիկ.
Սոխակն էլ է թփերիդ մէջ
Անուշ երգեր երգում անվերջ.
Երեւի դու լաւ համ ունես,
Որ բոլորն էլ գովում են եեզ.

Եւ արջուկը հաստամարմին
Ուզեց պոկել վարդը կարմիր.
Վարդի փուշը որպէս պաշտպան
Անմիջապէս խայթեց նրան.
Չար բռնորդ գոռաց ցաւից,
Ուզեց պոկել թուփն արմատից...

— Եկէ՛ք, հասէ՛ք վա՛յ իմ օրին,
Վարդի թուփն եմ հանում հողից.
Հարայ գցեց սոխակն անմար,
Թռչկոտելով ծառերից ծառ:

Թողած ծաղիկ մեղր ու փեթակ,
Ամէն կողմից թռան եկան,
Մեղունները շարա՛ն, շարա՛ն,
Որպէս գարնան հեղեղ վարար:
Ամէն մէկը բերեց իր հետ
Իր խայթիչը որպէս սուր նետ,
Օղակեցին սեւ փոքրիկ
Ու թափուեցին գլխին, ոտին...
Դողաց ցաւից արջուկը չար
Ու ետ փախաւ սարսափահար:

ԿԾԾԻ ՏԻԿԻՆԸ



Կծծի տիկին մը, հացի պահարանին բանալին հետը պտտցնելու սովորութիւն ունէր: Դուրս ելլելէ առաջ բանի մը շերտ հաց կը կտրէր սպասուհիին եւ ծառաներուն համար, որոնք միշտ դժգոհ էին իրենց ստացած անրաւարար սնունդին համար: Պատահեցաւ որ այս կծծի տիկինը դրացիներէն մէկուն տունը ճաշի հրաւիրուի: Եւ տիկինը մեկնեցաւ առանց մտածելու թէ տան ծառաներն ու սպասուհին կէսօրուան ճաշին հաց չունին: Ծառաներէն մին որ արդէն շատ դառնացած էր տիկնոջ այս վերաբերմունքէն, ուղղակի գնաց անոր հիւրընկալուած տունը, եւ բոլորին ներկայութեան յայտնեց թէ ճաշին հաց չունին եւ խնդրեց որ պահարանին բանալին յանձնէ: Տիկինը չհամարձակեցաւ մերժել ծառային այս օրինաւոր պահանջը, սակայն երբ տուն վերադարձաւ խիստ կերպով յանդիմանեց զայն, որ համարձակած էր իր անխորհուրդ արարքովը զինքը ծիծաղելի դարձնել եւ արգիլեց որ ուրիշ առիթով, ինչ որ ալ պատահելու ըլլայ, պահարանի բանալին ուզելու չգայ իր ետեւէն: Ժամանակ մը վերջ, միեւնոյն դէպքը կրկնուեցաւ: Ծառան ուզեց այս անգամ լաւ դաս մը տալ իր կծծի տանտիրուհիին: Երբ կէսօրուան ճաշի ժամը հնչեց, ան ներկայացաւ իր տիկնոջ եւ բոլոր ներկաներուն առջեւ ըսաւ.

— Տիկին. բանի որ չէք փափաքիր որ հացի բանալին ուզենք, խնդրեմ գոնէ հո՛ս. դուք, բացէք պահարանը որպէսզի մենք ալ կարեն նանք սեղան նստիլ...

Եւ նոյն պահուն իր ետեւէն ներս մտցուց բեռնավիր մը, հացին պահարանը շալկած, ինչ որ խնդալէն մարեցուց ներկայ հիւրերը: Վ.

Աղջնակը և Լացկիները

ՀԱՆՍ ԲՐՈՍԹԱՆ
ԱՆՏԵՐՍԱՆ

Ինչ ցուրտ: Ձիւնը կը տեղար և գիւղերը
մտ էր: Տարուան վերջին օրն էր, կաղնափ
նախօրեակը: Այդ ցուրտին, խաւարին մէջ, փող-
ցէն խեղճ աղջնակ մը անցաւ, զիխափաց և բոկոտն:
Իրաւ է, տունէն մեկնած ատեն մոռնակներ ունէր, բայց
քիչ ժամանակ օգտակար եղած էին անոնք: Մեծ մոռնակ-
ներէն, զորս իր մայրը գործածած էր, այնքան մեծ
որ աղջնակը զանոնք կորսնցուց երբ անապարան-
քով կ'անցներ Երկու կառքերու մէջտեղէն:



Աղջնակը կը քալէր ցուրտն կարմրած ու կա-
պուտցած ոտքերով, զոգնոցին մէջ շատ լացկի
ունէր, և ձեռքին ծառայէ: Այդ օրը ոչ մէկ զննոր
դի հանգիպած էր: Անօթի էր և կը մտէր, թու-
ռաւ կերպարանքով: Խեղճ պզտիկ:



Լոյսերը կը շողային պատուհաններէ,
խորովաններու հոտը կը տարածուէր: փող-
ցին մէջ: Կաղանդի նախօրեակն էր. այս
մասին կը խորհէր:



Նստաւ և կնկուցցաւ Երկու տուններու միջև:
Ցուրտը հնոգեմտեւ թափանցեց իրմէ ներս, բայց
չէր համարձակէր տուն վերադառնալ: Լացկիներ
ընտ պիտի տանէր, առանց նոյնիսկ դոյզն
դրամի մը:



Դայրը պիտի ձեռէր զինք և արդէն տունն
ալ ցուրտ չէր: Տանիքը կը բնակէին, և հով
ներս կը փչէր, հապառակ որ ծակերը յար-
դով և փոքրշերով զոցուած էին:



Իր փոքրիկ ձեռքերը ցուրտէն զրեթէ սառած էին չափ փոքր լուցկի մը ինչ մեծ բարիք սիրտ ըներ հատ մը առաւ ո'իչ: Ինչպէս ցայտեց, ինչպէս վառեցաւ լուցկին: Փոքրիկ մոմի մը չափ տաթ և պայծառ բոց ունէր երբ ձեռքերով զայն ձանկեց:



Ինչ տարօրինակ լոյս: Աղջնակը կը թուէր թէ ինչ նստած էր զուկերով զարդարուած և պղնձայ փայլուն կափարիչով մը ծածկուած մեծ վառարանի մը առջև: Կրակը այնքան շքեղօրէն կը վառէր, այնքան լաւ կը տաքցնէր:



Բայց ինչ եղաւ: Աղջնակը ոտքերը կ'երկարէր, զանոնք ալ տաքցնելու համար, երբ բոցը մարեցաւ, վառարանը անհետացաւ: Ձեռքին մէջ կտոր մը այրած լուցկի կար միայն:




Երկրորդ մըն ալ թեց, որ վառեցաւ, փայլեցաւ. և պատին այն մասը ուր փայլէ ինչպէս լլարի մը նման թափանցիկ եղաւ: Պզտիկը կրնար տեսնել սենեակ մը, ուր ճեղքակ սփռոցով և յախճապահայտ անոնքով ծածկուած սեղան մը կար շարդարուած, տաք մը կը ծխար և հեղտալի բոյր մը կ'արձակէր:



Ով զարմանք, ով երջանկութիւն. սազը յանկարծ ամանէն դուրս ցատկեց և տախտակա՝ մածին վրայ Բաւալէնով խեղճ աղջկան բով եկաւ: Լուցկին մարեցաւ, հաստ ու ցուրտ պատ մը կար միայն իր առջև:



Ահա երրորդ լուցկի մը: Աղջնակը ինքզինքն նստած տեսաւ Ծառերի շքեղ ծառի մը տակ: Իսկապէս մոմեր կը վառէին դալար ճիւղերուն վրայ, և ամէն զոյնէ պատկերներ, նման անոնց՝ որոնք խառնվեցին ցուցափեղկերը կը զարդարէն, կը զարդարէն կարծես իրենց:



Աղջնակը ծեռքնը բարձրացուց, լուցկին ճարձաւ. Ծեռնորի բոլոր մասերը եւ բարձրաւային, եւ բարձրաւային, և այն ատեն նկատեց թէ միայն աստղեր էին անոնք: Անոնցսէ մին ինկաւ և կրակէ ելլաւ զիմ մէջ գծեց երկինքին մէջ:



«Մէկը մեռաւ», խառնեց փոքրիկը, որով տես իր մեծ մայրը — որ իրեն հանդէպ մի բարդ անձը եղած էր, բայց որ հիմա մեռ էր — յաճախ կը կրկնէր իրեն. «Երբ աս կ'իյնայ, հոգի մըն է որ Աստուծոյ քով կ'երթայ»:



Մեծ մայրը, տաք զիս: Գիտեմ թէ երբ լուցկին ճարձաւ, ալ հոն պիտի լինէր. պիտի անհետնայ միաներուն պէս, տաք զիս մեծ մայրիկ:


Լուցկին մըն ալ, բանց պատին. մեծ լոյս մը յառաջ եկաւ, որուն մէջտեղ մեծ մայրը ծափ կ'եղած էր, քաղցրագէժ և լուսապայծառ:



Ամառադարձի մը, բանց մեջտեղ լուցկինները, որ հետեւ կ'ուզէր պատնել մեծ մայրը: Ան, քերթով լոյս առաւ արդէն, և նրկուքը միասին բոլոր հառադարձութիւն մէջ, այնքան բարձր որ առ զուրա կար, ոչ անսթափան, ոչ ալ անթրան: Աստուծոյ քով էր:



Բայց նրբ ցորտ առաւտըր եկաւ, անկիւնը, երկու տուններուն միջև, նստած էր աղջնակը, կարճաճ աչտերով, ձգիտը շրթերին... մեռած, ցորտէն մեռած, վերջին գիշերը տարուան:



Կաղաւորը ծաղնեցաւ փոքրիկ դիակին վրայ, որ նստած էր լուցկիններուն հետ, որոնցմէ զոմբն տափ մը ամբողջ վառած էր: «Տափեալ ուզեր եմ, ըսաւ մէկը: Ամէն ոք անգիտացաւ անոր տեսած աղւոր բաները, ոչ ոք իմացաւ թէ ինչ չէր ըրած: Բայց ան մտեր էր նոր տարիէն ներս, իր մեծ մոր հետ:

ՎԵՐՋ

ԹԱՐԳՄԱՆԵՅ

ՍԱՀԱԿ ՊԱԼԵՃՅԱՆ

ԳԾԵՅ

ՊԵՐՃ ՍՈՒԽԵԱՆ

Ա Ղ Բ Ի Ի Ր Ը



Երեք ուղեւորներ աղբիւրի մը քով իրարու հանդիպեցան.

Ձուրը կը լեցուէր քարաշէն նայն գուռի մը մէջ, որուն վրայ փոքրագրուած էին սա բառերը.

Անցո՛ւրդ, հմանէ՛ այս աղբիւրին:

Երեք ուղեւորները՝ ծարաւնին հագեցնելէ վերջ՝ ուզեցին հասկնալ արծանագրութեան իմաստը:

— Ասիկա ժամանակին յարգը գիտցող խելացի մարդու մը խորհուրդն է. — ըսաւ առաջին ուղեւորը: Աղբիւրը իր անընդհատ վազքով կը հեռանայ ակէն ու հետզհետէ իր մէջ կ'ընդունի բազմաթիւ վտակներ, այնպէս որ երբ ծովը հասնի, մեծ գետ մը ձեւացած կ'ըլլայ արդէն: Իր օրինակով աղբիւրը ըսել կ'ուզէ կարծես. «Աշխատասէր եղի՛ր, բնաւ մի՛ դանդաղիր, եւ պիտի յաջողիս ու բարգաւաճիս»:

Երկրորդ ուղեւորը, ծերունի մը, որ ձեռքի գիրքը կարդալու զբաղած էր, գլուխը վերցուց ու ըսաւ.

— Հոս աւելի բարձր դաս մը կայ. Աղբիւրը որ առանց որեւէ ակընկալութեան կը զովացնէ ու կը սփռփէ իրեն դիմող ամէն ծարաւի ուղեւորները, բացորոշապէս ըսել կ'ուզէ. «Բարիք գործէ՛ մի միայն բարիքի համար ու փոխարէնը ոեւէ վարձատրութիւն մի՛ սպասեր»:


Կը մնար երրորդ ուղեւորը, որ մինչեւ այն ատեն լուռ կեցած էր: Դեռարոյս երիտասարդ մըն էր ան, որ առաջին անգամ կը բաժնուէր իր հայրենիքէն ու իր մօրմէն: Ուղեւորները խնդրեցին որ ինք ալ բացատրութիւն մը տայ: Երիտասարդը նախ շիկնեցաւ, գլուխը խոնարհեցուց, ապա համարձակեցաւ խօսիլ.

— Այս արծանագրութիւնը, ըստ իս, տարբեր իմաստ ունի: Ինչ օգուտ պիտի ունենար աղբիւրին արագաշարժ վագրը կամ զովարար յատկութիւնը. եթէ ապականած ու նեխած ըլլար ան: Յստակ ու վճիտ ջուր մը ունենալուն մէջն է անոր յարգն ու արժէքը: Աղբիւրը երբ կը հրաւիրէ մեզ իրեն նմանիլ, քանասիրութեան կամ բարեգործութեան մղելէ առաջ, կը յորդորէ որ մաքուր հոգի մը կրենք իր վճիտ ջուրին նման, որպէսզի անոր մէջ ցոլանան երկինքի ոսկի ճաճանչները ու երկրի անուշաբոյր ծաղիկները:

— Ապրի՛ս, տղա՛ս, — ըսաւ ծերունին, գտար արծանագրութեան ճիշդ իմաստը: Շարունակէ՛ ճամբադ ու եղիր ժրաջան ու բարի. ատով յարգ ու պատիւ պիտի ընդունիս մարդոցմէ: Բայց ամէն բանէ վեր՝ ունեցի՛ր մաքուր ու անբիծ հոգի մը ու հոն պիտի ցոլանայ ու դրոշմուի Աստուծոյ պատկերը, ինչպէս որ նկարդ ցոլացած է հիմա աղբիւրի ջինջ հայելիին մէջ:



ԽԱՉԲԱՌ



Առաջադրուած ՅՐ. ՈՒՂԱՆՆԱ ԳԱՐՏԱՇԵԱՆԷ:

ՀՈՐԻ ԶՈՆԱԿԱՆ

- 1.— Բարերար
- 2.— Կակուղ հող, արեան խողովակիկ
- 3.— Ծրար, կշիռքի աչք, մոյթ
- 4.— Խողովակ, թիւ
- 5.— Միշտ, թիւ մը, կատակ (շրջուած)
- 6.— Իրանութիւն (մէկ տառ պակաս), գրաբարի մէջ գործիական հոլով (շրջուած)
- 7.— Ազդարար (խառն), մի քանի տառեր, էական բայէն
- 8.— Երկու տառեր, ծոյլ, բացազանչութիւն (շրջուած)
- 9.— Տասն եւ մէկ (շրջուած), ուղարկած, երանի թէ
- 10.— Չորս հարիւր, ընկերակցութիւն, ճինգ հազար

ՈՒՂԱՆՆԱ ՀԱՅԵԱՅ

- 1.— Մեր ազգին պատկանող
- 2.— Շուտ շարժող
- 3.— Կեդրոն
- 4.— Ժամանում, ասր
- 5.— Բոմբիւն, առարկայ (շրջուած)
- 6.— Խիստ պայծուցիկ նիւթ, վեց հարիւր վաթսուս (շրջուած)
- 7.— Ցուցական ածական, ընտիր
- 8.— Ալեւոր, խածի (շրջուած)
- 9.— Ազարակային չափ, մաղ
- 10.— Դարիճենիի համեմատոր տերեւ, յարգանք (հինգական տառ)
- 11.— Ընկ (որոշիչ), վեց հազար չորս հարիւր
- 12.— Կատաղի
- 13.— Բոլորը ընդգրկող

ՄԱՆԿԱԿԱՆ «ՏԵՂԵԿԱՏՈՒ»

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ

15, Էմաստ էլ Տին փողոց, Հեռ. 55636

Փոստարկ 1079 — ԳԱՀԻՐԷ